ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 98-Ա
25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թ.
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4/43 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 22,2 ՔԱՌ.Մ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, համաձայն Կապան համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Համայնքային սեփականություն համարվող գույքը /ոչ բնակելի տարածքները և շինությունները/ ուղղակի վաճառքով և հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում օտարման գին սահմանելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 103-Ն որոշման, հաշվի առնելով անշարժ գույքի գնահատման 20.08.2018թ. N128 հաշվետվությունը և համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, համայնքի ավագանին *որոշում է.*

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Շինարարների փողոցի 4/43 հասցեում գտնվող 22,2 քառ.մ մակերեսով ոչ բնակելի տարածքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08082018-09-0024/ օտարել հրապարակային սակարկություններով՝ մեկնարկային գին սահմանելով 305000 /երեք հարյուր հինգ հազար/ դրամ:
2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (10)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՆԱՐԵԿ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

2018 թ սեպտեմբերի 26
ք. Կապան